01 MAR 2013
0 6 FEB 2007
01 MAR 2010

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ պատմության ծրագիրը կառուցված է պրոֆ. Ա. Վ. Շեստակովի խմբագրությամբ մշակված և կառավարական Համամիութենական Հանձնաժողովի կողմից ընդունված «ԽՍՀՄ համառոտ պատմության» դասագրքի հիման վրա։

Պրոֆ. Շեստակովի խմբագրությամբ կազմված «ԽՍՀՄ պատմության համառոտ դասընթացն» ընդունված է կառավարական Համամիության Հանձնաժողովի կողմից վորպես դասագիրք տարրական դպրոցի յերրորդ և չորրորդ դասարանների համար, բայց նկատի ունենալով, վոր վոչ լրիվ միջնակարգ դպրոցի և միջնակարգ դպրոցի հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ դասարանների աշակերտները չեն ուսումնասիրել ԽՍՀՄ պատմությունը և, բացի դրանից, հիշված դասարանների համար առայժմ դեռ չկան պատմության դասագրքեր, հիշյալ գիրքը պետք է ոգտագործվի վորպես դասագիրք նաև 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների համար։

4-րդ դասարանում, ուր ընթացիկ ուսումնական տարում աշակերտները լիովին անցնելու յեն ԽՍՀՄ պատմության 120-ժամյա դասընթացը, բացի այն 80 ժամերից, վորոնք նախատեսված են ուսումնական պլանով պատմության դասերի համար, ուսումնական տարվա առաջին կիսում լրացուցիչ պետք է պատմության համար զատվի մեկ ժամ մայրենի լեզվի համար նախատեսված ժամերից, իսկ յերկրորդ կեսում մեկ ժամ թվաբանության ժամերից։

5-րդ, 6-րդ և 7-րդ դասարաններում, քաղաքացիական պատմության ուսումնասիրության համար նախատեսված ժամերը (քաղաքում—շաբաթական 2-ական ժամ, գյուղում—3-ական ժամ) ամբողջովին տրվում է ԽՍՀՄ պատմությանը։ Այս ժամերի շրջանակներում ԽՍՀՄ պատմության դասընթացն ամբողջովին պետք է յուրացվի։

Վորպեսզի պատշաճ բարձրության վրա դրվի ԽՍՀՄ պատ-

1481
37

342
Բ-40

34 474

*Ստալինյան Սահմանադրությունը դասավանդելու համար ներկա թեմատիկան նախատեսել է 68 ժամ, ուսումնական պլանով նախատեսված մնացած ժամանակը ուսուցչի հայեցողությամբ օգտագործվում է կրկնողության համար։*

*Թեմատիկայում՝ ուսուցիչներին օգնելու համար առանձին գլուխներին ցույց է տրված գրականություն, որ կազմել է Մոսկվայի գրադարանա-գիտական և հանձնարարական-մատենագրության գիտա-հետազոտական ինստիտուտը և լրացված է մեր կողմից Վրացական ՍՍՀ Սահմանադրության նյութերի կապակցությամբ։*

*Դպրոցներին՝ անհրաժեշտ է այժմս ապահովել դպրոցական գրադարանները հիշյալ գրականությամբ այն հաշվով, որպեսզի Ստալինյան Սահմանադրության ամեն մի դասատու հնարավորություն ունենա մաքսիմալ չափով օգտագործելու հիշյալ գրականությունը, Ստալինյան Սահմանադրության ուսուցումն իր արժանի մակարդակի վրա դնելու համար։*

**Միջնակարգ դպրոցի վարչության պետ՝**

**Վ. ԻՄԵԴԱՇՎԻԼԻ**

342
Բ-40

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

*ՍՍՀՄ Ստալինյան Սահմանադրության թեմատիկան հիմնականում կառուցված է ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի միջնակարգ դպրոցի վարչության մշակած «ՍՍՀՄ Ստալինյան Սահմանադրության թեմատիկայի» հիման վրա։*

*Մեր կողմից թեմատիկայի մեջ մտցված են լրացուցիչ կերպով Վրացական ՍՍՀ Սահմանադրության այն հոդվածները, որոնք նախատեսում են Վրաստանի հիմնական առանձնահատկությունները, որպես ՍՍՀՄ մեջ մտնող միութենական հանրապետություններից մեկը։ Վրացական ՍՍՀ Սահմանադրության 1, 11, 12, 14 գլուխները, որոնք ամբողջովին համընկնում են ՍՍՀՄ Սահմանադրության համապատասխան գլուխներին (1, 10, 11 և 13), ուսուցիչը պետք է զուգահեռաբար ծանոթացնի ՍՍՀՄ Սահմանադրության հիշատակված ամեն մի առանձին գլխի հետ։*

*Աբխազական և Աջարական ԻՍՍՀ և Հարավ-Օսեթիայի Ինքնավար Մարզի տերրիտորիայում գտնվող դպրոցներում իրենց ԻՍՍՀ Սահմանադրությունը կամ ինքնավար մարզի Կանոնադրությունը լրացուցիչ պետք է ուսումնասիրեն 24-րդ դասից (մատնանշված է թեմատիկայում) պատշաճ գլուխների կապակցությամբ։*

*Ստալինյան Սահմանադրության ուսուցման ժամանակ, ուսուցչին անհրաժեշտ է իմանալ, որ հիմնականում ուսումնասիրվում է ՍՍՀՄ Ստալինյան Սահմանադրությունը, իսկ Վրացական ՍՍՀ Սահմանադրությունն ու Աբխազական և Աջարական ԻՍՍՀ Սահմանադրությունն ու Հարավ-Օսեթիայի Կանոնադրությունը, լինելով Ստալինյան Սահմանադրության զավակը, նկատի ունեն նրանց հիմնական առանձնահատկությունն ու կառուցված են այնպես, որ ամբողջովին համապատասխանում են ՍՍՀՄ Սահմանադրությանը[1]—պետք է ուսումնասիրվեն լրացուցիչ, օրգանապես կապելով համապատասխան գլուխների հետ։*

---

[1] *ՍՍՀՄ Սահմանադրության 16-րդ հոդված։*

*մության ուսուցումը, ամեն մի դպրոցին անհրաժեշտ է նշել կոնկրետ միջոցառումներ ԽՍՀՄ պատմության ուսուցման դիտողականության համար, հատուկ ուշադրություն դարձնել դպրոցներն անհրաժեշտ քարտեզներով, սխեմաներով, նկարներով, պատմական զանազան փաստաթղթերով ապահովելու վրա, կարևոր դիդակտիկական նյութերով կապվել դպրոցին մոտ գտնվող թանգարանների հետ, իսկ շրջաններում, ուր չկան թանգարաններ, հնարավորության չափով էքսկուրսիաներ կազմակերպել դեպի մոտակա թանգարանները և այլն։*

*ԽՍՀՄ ժողովուրդների պատմության լավ և հիմնովին ուսուցումը—սուր զենք է յերիտասարդ սերնդի լենինյան-ստալինյան դաստիարակության գործում։ ԽՍՀՄ պատմության ուսուցման ժամանակ կարևոր մոմենտը հանդիսանում է պատմա-խրոնոլոգիական հետևողականության պահպանումը, պատմական դեպքերի և յերևույթների դասավորությունն այնպես, վորպեսզի աշակերտների հիշողության մեջ խորը տպավորվի հիմնական պատմական յերևույթները և պատմական գործիչների կյանքը։*

*Ուսուցիչը սիստեմատիկորեն պետք է աշխատի, վորպեսզի ամեն մի դասն առաջուց մշակի և պատրաստի հարկավոր նյութը, հարստացնի այն կոնկրետ բովանդակությամբ և ժամանակին զինի կարևոր դիդակտիկական նյութերով։ Դրանով նա կապահովի մեր մեծ հայրենիքի պատմության ուսուցման բարձրորակ և լավ անցկացումը։*

**Միջնակարգ դպրոցի վարչության պետ՝**
**Վ. ԻՄԵԴԱՇՎԻԼԻ**

# ԽՍՀՄ ՅԵՎ ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԹԵՄԱՏԻԿԱ

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*1-ին դաս—Առաջին Խորհրդային Սահմանադրությունը և ԽՍՀՄ կազմվելը։*

*2-րդ դաս—Փոփոխությունները Խորհրդային Միության կյանքում 1924—1936 թ. թ. ընթացքում։*

## 2. ԽՍՀՄ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### 1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

*3-րդ և 4-րդ դասեր—ԽՍՀՄ—բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետությունն է (ԽՍՀՄ Սահմ. 1-ին հոդվ.)։*

*5—6 դասեր—Աշխատավորների պատգամավորների խորհուրդը—ԽՍՀՄ քաղաքական հիմքն է (ԽՍՀՄ Սահմ. 2-րդ և 3-րդ հոդվ.)։*

*7—8 դասեր—ԽՍՀՄ տնտեսական հիմքը (4-րդ հոդվ.)։*

*9-րդ դաս—Սոցիալիստական սեփականության պետական ձևը (ԽՍՀՄ Սահմ. 5-րդ և 6-րդ հոդվ.)։*

*10-րդ դաս—Սոցիալիստական սեփականության կոոպերատիվ-կոլտնտեսային ձևը։ Մասնավոր մանր տնտեսություն (ԽՍՀՄ Սահմ. 5, 7—9-րդ հոդվ.)։*

*11-րդ դաս—Քաղաքացիների անձնական սեփականության իրավունքը (ԽՍՀՄ Սահմ. 10-րդ հոդվ.)։*

*12-րդ դաս — Տնտեսության պլանաձև վարումը ԽՍՀՄ-ում (ԽՍՀՄ Սահմ. 11-րդ հոդվ.)։*

*13-րդ դաս—Սոցիալիստական աշխատանքը ԽՍՀՄ-ում (ԽՍՀՄ Սահմ. 12-րդ հոդվ.)։*

## 2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

14-րդ դաս — ԽՍՀՄ—Միութենական պետություն է (ԽՍՀՄ Սահմ. 13 և 17-րդ հոդվ.)։

15-րդ դաս—ԽՍՀ Միության իրավասությունը (ԽՍՀՄ Սահմ. 14-րդ հոդվ.)։

16-րդ դաս—Միութենական հանրապետությունները և նրանց իրավունքները (ԽՍՀՄ Սահմ. 15—21-րդ հոդվ.)։

17-րդ դաս—ՌՍՖԽՀ (ԽՍՀՄ Սահմ. 22-րդ հոդվ.), ՈՒՍԽՀ (ԽՍՀՄ Սահմ. 23-րդ հոդվ.), ԲՍԽՀ (ԽՍՀՄ Սահմ. 29-րդ հոդվ.)։

18-րդ դաս—Ադրբեջանի ԽՍՀ (ԽՍՀՄ Սահմ. 24-րդ հոդվ.), Հայկական ԽՍՀ (ԽՍՀՄ Սահմ. 29-րդ հոդվ.), Ուզբեկական ԽՍՀ (ԽՍՀՄ Սահմ. 26-րդ հոդվ.), Տաջիկստանի ԽՍՀ (ԽՍՀՄ Սահմ. 27-րդ հոդվ.), Ղազախստանի ԽՍՀ (ԽՍՀՄ Սահմ. 28-րդ հոդվ.), Թուրքմենստանի ԽՍՀ (ԽՍՀ Սահմ. 29-րդ հոդվ.), Կիրգիզիայի ԽՍՀ (ԽՍՀՄ Սահմ. 29-րդ հոդվ.)։

## ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ (ՀՈԴՎ. 25)

19—20 դաս — Խորհրդային իշխանության հաստատվելը Վրաստանում։ Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության ստեղծվելը։ ԱՍՖԽՀ պատմական դերը և նշանակությունը։ Վրացական ԽՍՀ քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքի ծաղկումը, վորպես լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության փայլուն ապացույց։

Վր. ԽՍՀ Նոր սահմանադրության հաստատումը և Անդրֆեդերացիայի վերացումը։

21-րդ դաս—Մյուս իրավահավասար խորհրդային սոց. հանրապետությունների հետ Վրացական ԽՍՀ-ի կամավոր միացումը միութենական պետության մեջ (ԽՍՀՄ Սահմ. 13-րդ հոդվ., ՎԽՍՀ Սահմ. 13-րդ հոդվ.)։

22-րդ դաս—Վրացական ԽՍՀ իրավասությունները և իրավունքները (ԽՍՀՄ Սահմ. 15—21 հոդվ., ՎԽՍՀ Սահմ. 14—18 հոդվ.)։

23-րդ դաս—Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմը (ԽՍՀՄ Սահմ. 19-րդ հոդվ.)։



24-րդ դաս—Աբխազական և Աջարական ինքնավար սոցիալիստական հանրապետությունները, Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզը և նրանց կազմը (ՎԽՍՀ Սահմ. 20—24-րդ հոդվ.)։[1]

## 3. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

25-րդ դաս—ԽՍՀ Միության Գերագույն Խորհուրդը (ԽՍՀՄ Սահմ. 30—32, 36, 51—52, 56 հոդվ.)։

26-րդ դաս—Միության Խորհուրդ և Ազգությունների Խորհուրդ (ԽՍՀՄ Սահմ. 30—35, 37—47, 50 հոդվ.)։

27-րդ դաս—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահությունը (ԽՍՀՄ Սահմ. 48, 49, 53—55 հոդվ.)։

## 4. ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

28-րդ դաս—Միութենական հանրապետությունների պետական իշխանության բարձրագույն մարմինները (ԽՍՀՄ Սահմ. 57—63 հոդվ.)։

29-րդ դաս—Վրացական ԽՍՀ պետական իշխանության բարձրագույն մարմինները (ՎԽՍՀ Սահմ. 25—43 հոդվ.)։

## 5. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

30-րդ դաս — ԽՍՀՄ պետական կառավարման մարմինները (ԽՍՀՄ Սահմ. 64—73, 78 հոդվ.)։

31-րդ դաս — Համամիութենական ժողկոմատները (ԽՍՀՄ Սահմ. 74—77 հոդվ.), Միութենական-հանրապետական ժողկոմատներ (ԽՍՀՄ Սահմ. 78-րդ հոդվ.)։

## 6. ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

32-րդ դաս—Միութենական հանրապետությունների պետական

[1] Աբխազական և Աջարական ԽՍՀ և Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի տերրիտորիաներում գտնվող դպրոցներում լրացուցիչ կերպով ուսումնասիրվում է իրենց ինքնավար հանրապետության Սահմանադրությունը կամ ինքնավար մարզի Կանոնադրությունը։

իշխանության կառավարման մարմինները (ԽՍՀՄ Սահմ. 79—88-րդ հոդվ.)։

33-րդ դաս—Վրացական ԽՍՀ պետական կառավարման մարմինները (ԽՍՀՄ Սահմ. 44—53 հոդվ.)։

34-րդ դաս—Միութենական-հանրապետական ժողկոմատները և հանրապետական ժողկոմատները (ԽՍՀՄ Սահմ. 54—58-րդ հոդվ.)։

## 7. ԻՆՔՆԱՎԱՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

35-րդ դաս—Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների պետական իշխանության բարձրագույն մարմինները (ԽՍՀՄ Սահմ. 89—93-րդ հոդվ.)։

36—37-րդ դաս — Աբխազական և Աջարական ԻԽՍՀ պետական իշխանության բարձրագույն մարմինները (ՎԽՍՀ Սահմ. 59—67 հոդվ.), պետական կառավարման մարմինները (ՎԽՍՀ Սահմ. 68—75 հոդվ.)։ Հարավ-Ոսեթիայի Ինքնավար Մարզի պետական իշխանության մարմինները (ՎԽՍՀ Սահմ. 76—83 հոդվ.)։

## 8. ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

38-րդ դաս—Պետական իշխանության տեղական մարմինները (ԽՍՀՄ Սահմ. 94—101 հոդվ.)։

39—40-րդ դաս — Պետական իշխանության մարմինները Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզում, Վր. ԽՍՀ շրջաններում, քաղաքներում, ավաններում և գյուղերում (ԽՍՀՄ Սահմ. 84—111 հոդվ.)։

41-րդ դաս—Վր. ԽՍՀ բյուջեն (ՎԽՍՀ Սահմ. 112—116 հոդվ.)։

## 9. ԴԱՏԱՐԱՆ ՅԵՎ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

42—43 դաս — Դատարան և դատախազություն (ԽՍՀՄ Սահմ. 102—117 հոդվ.), Վր. ԽՍՀ դատարանը և դատախազության մարմինները (ՎԽՍՀ Սահմ. 117—130 հոդվ.)։

## 10. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

44—45 դաս — Աշխատանքի իրավունք, հանգստի իրավունք



4075

ծերության ժամանակ և աշխատունակությունը կորցնելու դեպքում նյութական ապահովության իրավունք (ԽՍՀՄ Սահմ. 118—120 հոդվ.)։

Կրթության իրավունք (ԽՍՀՄ Սահմ. 121-րդ հոդվ.)։

Կանանց իրավահավասարությունը (ԽՍՀՄ Սահմ. 122 հոդվ.)։

46-րդ դաս—Քաղաքացիների իրավահավասարությունը, անկախ նրանց ազգության և ցեղի (ԽՍՀՄ Սահմ. 123-րդ հոդվ.), Միութենական միասնական քաղաքացիության մասին (ԽՍՀՄ Սահմ. 21-րդ հոդվ.)։

47-րդ դաս—Խղճի ազատություն և հակակրոնական պրոպագանդի ազատություն (ԽՍՀՄ Սահմ. 124-րդ հոդվ.)։

48—49 դաս — Խոսքի ազատություն, մամուլի ազատություն, ժողովների և միտինգների ազատություն, փողոցային յերթերի և ցույցերի ազատություն (ԽՍՀՄ Սահմ. 125 հոդվ.)։ Հասարակական կազմակերպություններում միանալու ազատություն (ԽՍՀՄ Սահմ. 126-րդ հոդվ.)։

50—51 դաս—Համ. Կ(բ)Կ աշխատավորության առաջավոր ջոկատն է, աշխատավորների բոլոր կազմակերպությունների ղեկավար միջուկը (ԽՍՀՄ Սահմ. 127-րդ հոդվ.)։

52-րդ դաս — Անձի, բնակարանի և գաղտնի թղթակցության անձեռնմխելիություն (ԽՍՀՄ Սահմ. 127—128 հոդվ.)։

53-րդ դաս—Ապաստանի իրավունք (ԽՍՀՄ Սահմ. 129 հոդվ.)։

54—55 դաս—Քաղաքացիների պարտականությունները (ԽՍՀՄ Սահմ. 130—131 հոդվ.)։

56—57 դաս — Հայրենիքի պաշտպանությունը—ԽՍՀՄ բոլոր քաղաքացիների պարտքն է ու պարտականությունը (ԽՍՀՄ Սահմ. 132—133 հոդվ.)։

## 11. ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ (ԽՍՀՄ Սահմ. 134—142 հոդվ.)

58-րդ դաս—Ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունք գաղտնի քվեարկությամբ։

59-րդ դաս—Ընտրական իրավունքը ԽՍՀՄ-ում և կապիտալիստական յերկրներում։

60-րդ դաս—Ընտրությունների կարգը ԽՍՀՄ-ում ըստ Ստալինյան նոր Սահմանադրության։

34.474

## 12. ԶԻՆԱՆՇԱՆԸ, ԴՐՈՇԱԿԸ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

61-րդ դաս—ԽՍՀՄ զինանշանը, դրոշակը, մայրաքաղաքը (ԽՍՀՄ Սահմ. 143—145 հոդվ.)։

62-րդ դաս—Վրացական ԽՍՀ պետական լեզուն, զինանշանը, դրոշակը, մայրաքաղաքը (ՎԽՍՀ Սահմ. 156—161 հոդվ.)։

## 13. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

63-րդ դաս.—Սահմանադրության փոփոխման կարգը (ԽՍՀՄ Սահմ. 146-րդ հոդվ.)։[1]

64, 65 և 66-րդ դասեր—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրությունը։

## 14. ՍՏԱԼԻՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

67-րդ դաս—Ստալինյան Սահմանադրության հիմնական առանձնահատկությունները։ Ստալինյան Սահմանադրության համաշխարհային-պատմական նշանակությունը։

68-րդ դաս—ՍՏԱԼԻՆԸ—ԽՍՀՄ նոր Սահմանադրության ստեղծողն է։

---

[1] Նկատի ունենալով, որ Վրացական ԽՍՀ Սահմանադրության 1, 11, 12 և 14 գլուխները ամբողջովին համընկնում են ԽՍՀՄ Սահմանադրության 1, 10, 11 և 13 գլուխներին, Ստալինյան Սահմանադրության ուսուցման թեմատիկայում Վր. ԽՍՀ Սահմանադրության հիշյալ գլուխները առանձին չեն մնալ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0221115

Կոմբինատի տպարան Վր. Կ(բ) Կ ԿԿ հրատ. «Զարյա Վոստոկա»

Պատվեր № 3701 Գլավլիտ № 19009/a Տիրաժ 1000